

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՄԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Թասիկ բնակավայրում իրականացնել անհատական բնակելի տան կառուցապատման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքում առկա են հողեր որոնք նպատակային նշանակության փոփոխությունից հետո կարող են օտարվել քաղաքացիներին անհատական բնակելի տուն կառուցելու համար, ուստի հողատակացման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Թասիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողեր կատեգորիայի այլ հողատեսքերից 0.12հա հողամասը փոխադրել բնակավայրերի հողեր կատեգորիա՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

05.08.2020թ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՄԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ԱՍՏՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

05.08.2020թ

Հատակագիծ

22 Սյունիքի մարզի Մխիթան համայնքի թափայլ գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող նպատակային նշանակությունը գյուղատնտեսական (գործառնական) նշանակությունը գյուղ այլ հողատեսք) բնակավայրերի (գործառնական) նշանակությունը բնակելի կառուցապատման) կատեգորիա փոխադրվող 0.12 հա հողամասի

Մ 1:10000



Կատարող

Ստորագրություն

Որակավորման վկայականի

0242

29.10.2012

Իրավաբանական անձի

8811095561

<<Գյուղն Լյուքս>>ՍՊԸ

պետական գրանցման համարը

անվանումը

ՀԱՄԱՏԱՏՐԻՄԵՆ

ՀՀ Սյունիքի մարզի Մխիթան համայնքի նկատմամբ կատարվող 0.12 հա հողամասի

2020թ.

1 փոխադրվող տարածք 0.12 հա

ԳՎԼՄ ՁՄՍՆ	ԳՎԻՄ ՎԼՄՓԵ	Կոորդինատներ	ԳՎԻՄ ՁՄՍՆ
1	X	Y	45.00
2			26.66
3			45.00
4			26.66
5			



20.05.2020թ.

Ստորագրություն

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 87

ք. Երևան

07.07.2020թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14-5/3192-20, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.2/1025-2020, ՀՀ էկոնոմիկայի 03/1553-2020 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության 4890-2020 և Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության 22520-2020, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/4879-2020, Կադաստրի կոմիտեի ԴՍ/903-2020 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Թասիկ բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.12 հա այլ հողեր (կադաստրային ծածկագիր՝ 09-036-0003-0001-ից) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. Տերտերյան

քարտուղար՝



Մ. Մկրտչյան